



2016 թվականի մայիսի 29-ին Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցուն հարակից Գորգասալի հրապարակում տեղի ունեցավ Սայաթնովյան 102-րդ ավանդական «Վարդատոնը»:

Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի, նկարիչ Գևորգ Բաղինջադյանի և բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլու նախաձեռնությամբ սկիզբ դրված սայաթնովյան «Վարդատոնը» Թբիլիսիի բնակչության սիրված և նվիրական տոներից մեկն է, որին մասնակցում է քաղաքի բազմազգ հասարակությունը և ամեն տարվա մայիս ամսվա վերջին կիրակի օրը, չսպասելով հայտարարության ու հրավերի, գալիս է՝ վարդերով զարդարելու մեծ սիրերգակի ու բանաստեղծի գերեզմանը, ով նվիրվելով իր սիրելի քաղաքի պաշտպանությանը, հանգչում է հայոց հինավուրց եկեղեցու բակում, գալիս է վերստին ըմբռնելու անմահ բանաստեղծ-երգչի խոհա-փիլիսոփայական, սիրային ու խրատական երգերի ու բանաստեղծությունների հմայքը:

Հանդիսությանն իր մասնակցությունը բերեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր

Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Բենահարթակում էին Առաջնորդի օգնական հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը, Թբիլիսիի Սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, ՀՀ գրողների միության պատվիրակությունը՝ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի գլխավորությամբ, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնագարը, Վրաստանի գրողների միության նախագահ Ռևազ Միշվելաձեն, համանախագահ Մադվալա Գոնաշվիլին, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը, համայնքային գործիչներ, հյուրեր:

Միջոցառումը սկսվեց Վիրահայոց թեմի առաջնորդի օրհնությամբ և բարենաղթանքով: Սրբազան Հայրը երախտիքի խոսքեր ուղղեց Վրաստանի և քաղաքամայր Թբիլիսիի իշխանություններին, ում աջակցությամբ Սայաթնովյան Վարդատունը դարձել է իսկական ժողովրդական այնպիսի տոնահանդես, որը հարիր է բազմազգ ու բազմակրոն այս քաղաքին:

Թբիլիսիի Սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, խոսելով Սայաթ-Նովա հանձարի մասին, կարևորեց մշակույթների, լեզուների ու դավանանքների այն բազմազանությունը, որը զարգանում է այս երկրում:

Ողջույնի և շնորհավորանքի խոսքով ելույթ ունեցան հայ և վրացի գրողներ, բանաստեղծներ, համայնքային առաջնորդներ, ովքեր մեծարեցին այն ժողովրդին, ով աշխարհին տվել է Սայաթ-Նովա աշուղին, արժևորեցին այն քաղաքը, որտեղ ապրել և ստեղծագործել է Սայաթ-Նովա հանձարը, խոնարհվեցին և զմայլվեցին 300-ամյա և արդիականությունը չկորցրած Սայաթ-Նովայով:

Այնուհետև սկսվեց տոնահանդեսի համերգային մասը, որին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության Հանրային ռադիոյի աշուղական երգի Սայաթ-Նովա պետական վաստակավոր համույթը, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ, Վիրահայոց թեմի երգչախմբի և «Հայարտուն» կենտրոնի մենակատարները, «Քսովրելեբի» համույթը, «Անի», «Վանք», «Ջեյրան» պարային խմբերը, Պետրոս Ադամյանի անվան հայպետդրամայի թատրոնի դերասաններ:

Ժողովրդական տոնական հանդիսությունը կազմակերպել էին Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը, Վիրահայերի միությունը՝ աջակցությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի, Վրաստանում ՀՀ դեսպանության, Թբիլիսիի քաղաքապետարանի և Սակրեբուլոյի, Հայաստանի

Հանրապետության ու Վրաստանի մշակույթի նախարարությունների:



